297

1. Ճամփաս լույս է, բայց քարքարոտ,
Առջևում՝ կյանքի արոտ,
Քեզ գտնողը կյանք է գտել,
Դու Աստված ես փառավոր:

Օրվա հացի կարոտ մնամ,
Բոբիկ ոտքով ճամփաս գնամ,
Միայն, Տե՛ր, ինձ հետ եղի՛ր,
Ողորմի՛ր Ինձ՝ Քեզ չուրանամ:

2. Դու ասացիր. «Ես եմ ճամփան,
Ես եմ բարի Հովիվը»:
Ապահով է հոտդ ամբողջ,
Չես խնայել կյանքը Քո:

3. Ասած խոսքդ սրտիս կպավ,
Ինչպե՞ս կանեմ ես չար բան,
Խաչիդ խորհուրդն ինձ բացեցիր,
Հեռու մնաց հին ճամփան:

4. Կյանքս՝ խաղաղ, սիրտս՝ ուրախ,
Հեռացել է ինձնից վախը,
Պարտվել է նույնիսկ մահը,
Տե՛ր ջան, օրհնի՛ր իմ ճամփան:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025